H8794_27A009HY_M
4422927541_S001_009_HY
PBP #: 009

Kaiser Foundation Health Plan, Inc.-ի կողմից առաջարկվող
Kaiser Permanente Dual Complete South P9 (HMO D-SNP), Հարավային Կալիֆոռնիայի շրջան

Փոփոխությունների տարեկան ծանուցագիր 2027 թվականի համար

Ներածություն

Դուք այժմ գրանցված եք որպես մեր ապահովագրության պլանի անդամ: Հաջորդ տարի կլինեն որոշ փոփոխություններ՝ կապված մեր նպաստների, ապահովագրական ծածկույթի, կանոնների և ծախսերի հետ: Սույն *Փոփոխությունների տարեկան ծանուցագիրը* տեղեկացնում է, թե ինչ փոփոխություններ են սպասվում, և որտեղից կարելի է ավելի շատ տեղեկություններ ստանալ այդ փոփոխությունների մասին: Պլանի ծախսերի, նպաստների կամ կանոնների մասին ավելի շատ տեղեկություններ ստանալու համար ուսումնասիրեք մեր վեբ կայքում գտնվող *Անդամի ձեռնարկը (Member Handbook)*՝ այցելելով kp.org/eocscal (Անգլերեն): Փոստով պատճենը ստանալու համար զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ էջի ներքևում նշված հեռախոսահամարով: Հիմնական տերմինները և դրանց սահմանումները այբբենական կարգով տրված են *Անդամի ձեռնարկի* վերջին գլխում:

Լրացուցիչ ռեսուրսներ

- Այս փաստաթուղթն անվճար կարող եք ստանալ արաբերեն, հայերեն, կամբոջերեն, չինարեն, պարսկերեն, կորեերեն, իսպաներեն, տագալերեն, վիետնամերեն:
- Դուք կարող եք ձեռք բերել այս *Փոփոխությունների տարեկան ծանուցումն* անվճար այլ ձևաչափերով, օրինակ՝ մեծ տառաչափով տպագիր տարբերակով, Բրայլի գրատիպով, ձայնային ֆայլի կամ տվյալների ֆայլի ձևաչափով: Զանգահարեք 1-800-443-0815 (TTY 711) հեռախոսահամարով:
- Զանգահարեք 1-800-443-0815 (TTY 711) հեռախոսահամարով, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00, շաբաթական 7 օր՝ հետևյալ դեպքերում.
    - Անգլերենից բացի նախընտրելի լեզու և/կամ այլընտրանքային ձևաչափ:
    - Հետագա փոստային նամակագրությունների և հաղորդակցությունների համար մշտական հարցում, **և**
    - Նախընտրելի լեզվի և/կամ ձևաչափի վերաբերյալ մշտական հարցման փոփոխություն:

OMB Approval 0938-1444 (Expires 05/31/2029)

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

ATTENTION: If you need help in your language, call 1-800-443-0815 (TTY 711). Aids and services for people with disabilities, like documents in braille and large print, are also available. Call 1-800-443-0815 (TTY 711). These services are free of charge.

ARABIC

تنبيه: إذا كنت بحاجة إلى المساعدة بلغتك، فاتصل على الرقم 1-800-443-0815 (TTY 711). وتتوفر لدينا أيضا مساعدات وخدمات للأشخاص الذين يعانون إعاقات، مثل مستندات بلغة برايل والطباعة بخط كبير. اتصل بالرقم 1-800-443-0815 (TTY 711). هذه الخدمات مجانية بدون تكلفة.

ARMENIAN

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. եթե ձեր լեզվով օգնության կարիք ունեք, զանգահարեք 1-800-443-0815 (TTY 711): Հասանելի են նաև աջակցություն և ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպես օրինակ՝ փաստաթղթեր բրայլով կամ մեծ տառատեսակով: Զանգահարեք 1-800-443-0815 (TTY 711): Այս ծառայություններն անվճար են:

CHINESE

請注意：如果您需要語言協助，請致電 1-800-443-0815 (TTY 711)。殘障人士亦有提供協助和服務，例如點字和大字體的文件。請致電 1-800-443-0815 (TTY 711)。以上服務為免費提供。

PUNJABI
ਧਿਆਨ ਦਿਓ: ਜੇਕਰ ਤੁਹਾਨੂੰ ਆਪਣੀ ਭਾਸ਼ਾ ਵਿੱਚ ਮਦਦ ਚਾਹੀਦੀ ਹੈ, ਤਾਂ 1-800-443-0815 (TTY 711) 'ਤੇ ਕਾਲ ਕਰੋ। ਵਿਕਲਾਂਗ ਵਿਅਕਤੀਆਂ ਲਈ ਸਹਾਇਤਾਵਾਂ ਅਤੇ ਸੇਵਾਵਾਂ, ਜਿਵੇਂ ਕਿ ਬ੍ਰੇਲ ਅਤੇ ਵੱਡੇ ਪ੍ਰਿੰਟ ਵਿੱਚ ਦਸਤਾਵੇਜ਼ ਵੀ ਉਪਲਬਧ ਹਨ। 1-800-443-0815 (TTY 711) 'ਤੇ ਕਾਲ ਕਰੋ। ਇਹ ਸੇਵਾਵਾਂ ਮੁਫ਼ਤ ਹਨ।

HINDI
ध्यान दें: अगर आपको अपनी भाषा संबंधी कोई सहायता चाहिए, तो 1-800-443-0815 (TTY 711) पर कॉल करें। विकलांग व्यक्तियों के लिए सहायताएँ और सेवाएँ, जैसे कि ब्रेल और बड़े प्रिंट में दस्तावेज़, भी उपलब्ध हैं। 1-800-443-0815 (TTY 711) पर कॉल करें। ये सेवाएँ मुफ़्त दी जाती हैं।

HMONG
CEEB TOOM: Yog koj xav tau kev pab ua koj yam lus, hu rau 1-800-443-0815 (TTY 711). Kuj muaj cov kev pab cuam rau cov neeg uas muaj kev xiam oob qhab, xws li cov ntawv xuas rau cov dig muag thiab cov ntawv luam loj. Hu 1-800-443-0815 (TTY 711). Cov kev pab cuam no yog muab pab dawb.

JAPANESE

注意：言語でのサポートをご希望の場合は、1-800-443-0815 (TTY 711) までご連絡ください。点字を用いた資料や大きな文字で書かれた資料など、障害を持つお客様向けの支援とサービスをご利用いただけます。1-800-443-0815 (TTY 711) までご連絡ください。これらのサービスは、無料でご利用いただ
けます。

KOREAN

주의: 귀하의 언어로 도움이 필요하시면 1-800-443-0815 (TTY 711) 번으로 전화하십시오. 점자 및 큰 활자로 된 문서 등 장애인을 위한 지원 및 서비스도 제공됩니다. 1-800-443-0815 (TTY 711) 번으로 전화하십시오. 이러한 서비스는 무료입니다.

LAOTIAN

ໝາຍເຫດ: ຖ້າທ່ານຕ້ອງການຄວາມຊ່ວຍເຫຼືອເປັນພາສາຂອງທ່ານ, ກະລຸນາໂທຫາ 1-800-443-0815 (TTY 711). ການຊ່ວຍເຫຼືອ ແລະ ການບໍລິການແມ່ນມີໃຫ້ສຳລັບຄົນທີ່ມີຄວາມພິການນຳ ເຊັ່ນ: ເອກະສານເປັນຕົວໜັງສືນູນ ແລະ ຕົວໜັງສືໃຫຍ່.
ໂທຫາ 1-800-443-0815 (TTY 711). ການບໍລິການເຫຼົ່ານີ້ບໍ່ໄດ້ເສຍຄ່າ.

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

MIEN

CAU FIM JANGX OC: Beiv hnangv meih qiemx zuqc longc mienh faan benx meih nyei waac bun muangx, mborqv finx lorz 1-800-443-0815 (TTY 711). Maaih jaa-sic tengx aengx caux tengx nzie weih bun wuaaic fangx mienh, liepc duqv maaih nzangc-pokc bun hluo aengx caux aamx cuotv domh zeiv daan bun longc. mborqv finx lorz 1-800-443-0815 (TTY 711). Wangv henh tengx naaiv deix gong mv zuqc ndortv nyaanh cingv oc.

CAMBODIAN

យកចិត្តទុកដាក់៖ ប្រសិនបើអ្នកត្រូវការជំនួយជាភាសារបស់អ្នក សូមហៅទូរសព្ទទៅលេខ 1-800-443-0815 (TTY 711)។ ជំនួយ និងសេវាកម្មសម្រាប់ជនពិការ ដូចជាឯកសារជាអក្សរស្នាប និងអក្សរធំៗក៏មានផងដែរ។ ហៅទូរសព្ទទៅលេខ 1-800-443-0815 (TTY 711)។ សេវាកម្មទាំងនេះគឺមិនគិតថ្លៃទេ។

FARSI

توجه: در صورت نیاز به کمک به زبان خود، با شماره 1-800-443-0815 (TTY 711) تماس بگیرید. کمک‌ها و خدمات برای افراد دچار معلولیت، مانند اسناد با خط بریل و چاپ بزرگ نیز در دسترس است. با شماره 1-800-443-0815 (TTY 711) تماس بگیرید. این خدما تو ایگان است.

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

RUSSIAN

ВНИМАНИЕ! Если вам нужна помощь на вашем языке, позвоните на номер 1-800-443-0815 (TTY 711). Также доступны вспомогательные средства и услуги для лиц с инвалидностью, такие как документы, напечатанные шрифтом Брайля и крупным шрифтом. Звоните на номер 1-800-443-0815 (TTY 711). Эти услуги бесплатны.

SPANISH

ATENCIÓN: Si necesita ayuda en su idioma, llame al 1-800-443-0815 (TTY 711). Se encuentran disponibles ayudas y servicios para personas con discapacidad, como documentos en braille y letra grande. Llame al 1-800-443-0815 (TTY 711). Estos servicios son gratuitos.

TAGALOG

PAUNAWA: Kung kailangan ninyo ng tulong na nasa inyong wika, tumawag sa 1-800-443-0815 (TTY 711). Ang mga tulong at serbisyo para sa mga taong may kapansanan, tulad ng mga dokumento na nasa braille at malalaking letra, ay available rin. Tumawag sa 1-800-443-0815 (TTY 711). Ang mga serbisyong ito ay walang bayad.

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

THAI

โปรดทราบ: หากคุณต้องการความช่วยเหลือเป็นภาษาของคุณ กรุณาติดต่อที่หมายเลข 1-800-443-0815 (TTY 711) นอกจากนี้ ยังมีการให้ความช่วยเหลือและบริการแก่คนพิการ เช่น เอกสารอักษรเบรลล์และตัวพิมพ์ขนาดใหญ่อีกด้วย ติดต่อที่หมายเลข 1-800-443-0815 (TTY 711) บริการเหล่านี้ไม่มีค่าใช้จ่าย

UKRAINIAN

УВАГА! Якщо вам потрібна допомога вашою мовою, телефонуйте за номером 1-800-443-0815 (TTY 711). Також доступні допоміжні засоби й послуги для людей з інвалідністю, наприклад документи, надруковані шрифтом Брайля чи великим шрифтом. Телефонуйте за номером 1-800-443-0815 (TTY 711). Ці послуги є безкоштовними.

VIETNAMESE

CHÚ Ý: Nếu quý vị cần được trợ giúp bằng ngôn ngữ của mình, hãy gọi 1-800-443-0815 (TTY 711). Trợ giúp và dịch vụ dành cho người khuyết tật như bản in chữ nổi Braille và chữ cỡ lớn cũng được cung cấp. Xin gọi 1-800-443-0815 (TTY 711). Những dịch vụ này được cung cấp miễn phí.

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

Բովանդակություն

A. Պատասխանատվությունից հրաժարում ..... 9 !

B. Հաջորդ տարվա համար ձեր Medicare և Medi-Cal ծածկույթի վերանայում ..... 9 !

B1. Տեղեկություններ մեր պլանի մասին ..... 10 ,

B2. Կարևոր անելիքներ ..... 11 ,

C. Ձեր պլանի անվան փոփոխություններ ..... 12 !

D. Փոփոխություններ մեր ցանցի բուժծառայություններ մատուցողների և դեղատների ցանկում ..... 12 !

E. Նպաստների և ծախսերի փոփոխությունները հաջորդ տարվա համար ..... 13 !

E1. Նպաստների և ծախսերի փոփոխություններ բժշկական ծառայությունների համար ..... 13 ,

E2. Փոփոխություններ դեղերի փոխհատուցման ծածկույթում ..... 21 ,

E3. Փուլ 1. «Սկզբնական փոխհատուցման փուլ» ..... 24 ,

E4. Փուլ 2. «Կրիտիկական փոխհատուցման փուլ» ..... 27 ,

F. Վարչական փոփոխություններ ..... 27 !

G. Պլանի ընտրությունը ..... 27 !

G1. Մեր պլանում մնալը ..... 27 ,

G2. Պլանի փոփոխում ..... 27 ,

H. Աջակցության տրամադրում ..... 33 !

H1. Մեր պլանը ..... 33 ,

H2. Բժշկական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության ծրագիր (HICAP) ..... 33 ,

H3. Ombudsman Program ..... 34 ,

H4. Medicare ..... 34 ,

H5. Կալիֆոռնիայի կառավարվող բուժխնամքի վարչություն ..... 35 ,

H6. Medicare Prescription Payment Plan ..... 36 ,

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

A. Պատասխանատվությունից հրաժարում

- Kaiser Permanente-ն HMO Երկակի որակավորման հատուկ կարիքների ծրագրի (Dual Eligible Special Needs Plan, D-SNP) պլան է, որը պայմանագիր է կնքել Medicare-ի և Medi-Cal ծրագրերի հետ: Kaiser Permanente-ին անդամակցությունը կախված է պայմանագրի թարմացումից:

- Առողջ սննդի նպաստը քրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց համար նախատեսված հատուկ լրացուցիչ ծրագրի մի մասն է: Ոչ բոլոր անդամներն են իրավասու ստանալու այս նպաստը: Իրավասու լինելու համար անդամները պետք է ունենան որոշակի քրոնիկ հիվանդություններ, ինչպիսիք են շաքարախտը, ճարպակալումը, սրտանոթային խանգարումները, օստեոարթրիտը կամ երիկամների քրոնիկ հիվանդությունը: Կան նաև այլ հիվանդություններ, որոնց առկայության դեպքում դուք կարող եք իրավասու լինել ստանալու այս նպաստը: Այս նպաստը ստանալու իրավասությունը չի կարող երաշխավորվել միայն ձեր հիվանդության հիման վրա: Նախքան նպաստի տրամադրումը պետք է բավարարվեն իրավասության բոլոր կիրառելի պահանջները: Մանրամասների համար խնդրում ենք կապվել մեզ հետ:

B. Հաջորդ տարվա համար ձեր Medicare և Medi-Cal ծածկույթի վերանայում

Կարևոր է ծանոթանալ ձեր ապահովագրական ծածկույթին հիմա՝ համոզվելու համար, որ այն հաջորդ տարի նույնպես կբավարարի ձեր կարիքները: Եթե այն չի բավարարում ձեր կարիքները, դուք կարող եք հրաժարվել մեր պլանից: Տե՛ս **E բաժինը**՝ հաջորդ տարվա ձեր նպաստների փոփոխությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար:

Եթե որոշում եք հրաժարվել մեր պլանից, ձեր անդամակցությունը կավարտվի ամսվա վերջին օրը, երբ ներկայացվել է ձեր հարցումը: Դուք կշարունակեք օգտվել Medicare և Medi-Cal ծրագրերից այնքան ժամանակ, քանի դեռ իրավասու եք:

Եթե դուրս գաք մեր պլանից, դուք հնարավորություն կունենաք տեղեկանալու՝

- Medicare-ի տարբերակների մասին՝ **G2 բաժնում** ներկայացված աղյուսակում:
- Medi-Cal-ի տարբերակների և ծառայությունների մասին՝ **G2 բաժնում**:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

B1. Տեղեկություններ մեր պլանի մասին

- Kaiser Permanente Dual Complete South P9 պլանը առողջապահական ծրագիր է, որը պայմանագիր է կնքել և՛ Medicare-ի, և՛ Medi-Cal-ի հետ՝ անդամներին այս երկու ծրագրերի նպաստները տրամադրելու համար:
- Սույն *Փոփոխությունների տարեկան ծանուցագրում* օգտագործվող «մենք», «մեզ», «մեր» կամ «մեր պլանը» հասկացությունները վերաբերում են Medicare-ի Medi-Cal պլանին:

B2. Կարևոր անելիքներ

- **Ստուգեք՝ արդյոք մեր նպաստների և ծախսերի հետ կապված կան այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են ազդել ձեզ վրա:**
    - Կա՞ն փոփոխություններ, որոնք ազդում են այն ծառայությունների վրա, որոնցից օգտվում եք:
    - Ծանոթացեք նպաստների և ծախսերի հետ կապված փոփոխություններին՝ համոզվելու համար, որ դրանք հարմար են ձեզ հաջորդ տարվա համար:
    - Տե՛ս **E1 բաժինը**՝ մեր պլանի նպաստների և ծախսերի հետ կապված փոփոխությունների մասին ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:
- **Ստուգեք՝ կան արդյոք փոփոխություններ ձեզ վերաբերող դեղերի ծածկույթում:**
    - Արդյո՞ք ձեր դեղերը փոխհատուցվելու են: Արդյո՞ք դրանք ծախսերի բաշխման տարբեր կատեգորիաներում են: Կարո՞ղ եք արդյոք օգտվել նույն դեղատներից: Կլինի՞ արդյոք որևէ փոփոխություն, ինչպիսին է նախնական թույլտվությունը:
    - Ծանոթացեք փոփոխություններին՝ համոզվելու համար, որ դեղերի ծածկույթը հարմար է ձեզ հաջորդ տարվա համար:
    - Տե՛ս **E2 բաժինը**՝ մեր դեղորայքի փոխհատուցման պայմանների հետ կապված փոփոխությունների մասին ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:
    - Հնարավոր է՝ ձեր դեղերի ծախսերը ավելացել են անցյալ տարվա համեմատ:
        - Խորհրդակցեք ձեր բժշկի հետ՝ ավելի ցածր գնով այլընտրանքային մատչելի դեղերի վերաբերյալ. դա կարող է բավականին կրճատել ձեր անձնական ծախսերը տարեկան կտրվածքով:
        - Նկատի ունեցեք, որ, կախված պլանից, դեղերի ձեռքբերման հետ կապված ձեր անձնական ծախսերը կարող են փոխվել:
- **Ճշտեք՝ արդյո՞ք ձեր բուժծառայություններ մատուցողներն ու դեղատները ընդգրկված են մեր հաջորդ տարվա ցանցում:**
    - Արդյո՞ք ձեր բժիշկներն ու մասնագետներն ընդգրկված են մեր ցանցում: Իսկ դեղատնե՞րը, որտեղից օգտվում եք: Իսկ ի՞նչ կասեք այն հիվանդանոցների կամ այլ մատակարարների մասին, որոնցից օգտվում եք:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

- Տե՛ս **D բաժինը**՝ մեր *Մատակարարների և դեղատների տեղեկատուին (Provider and Pharmacy Directory)* ծանոթանալու համար:

- **Հաշվարկեք ձեր ընդհանուր ծախսերը մեր պլանում:**
  - Որքա՞ն գումար եք ծախսելու ձեր գրպանից՝ ծառայությունների և դեղերի համար, որոնք պարբերաբար օգտագործում եք:
  - Ինչպե՞ս են համեմատվում ընդհանուր ծախսերն ապահովագրական ծածկույթի այլ տարբերակների հետ:
- **Մտածեք՝ արդյոք գոհ եք մեր պլանից:**

Եթե որոշում եք մնալ Kaiser Permanente Dual Complete South P9-ում.

Եթե ցանկանում եք մնալ մեր պլանում հաջորդ տարի, ապա ձեզնից ոչինչ պետք չէ անել: Եթե որևէ փոփոխություն չանեք, դուք ավտոմատ կերպով գրանցված կմնաք Kaiser Permanente Dual Complete South P9 պլանում:

Արդյո՞ք ցանկանում եք փոխել պլանը.

Եթե գտնեք, որ ուրիշ ապահովագրական պլան ձեզ ավելի հարմար է, կարող եք փոխել այն (տե՛ս **G2 բաժինը**՝ մանրամասն տեղեկությունների համար): Եթե գրանցվեք նոր պլանում կամ ընտրեք Original Medicare, ձեր նոր ապահովագրական պլանը կմեկնարկի հաջորդ ամսվա առաջին օրից:

C. Ձեր պլանի անվան փոփոխություններ

2027 թվականի հունվարի 1-ից Ձեր ծրագրի անվանումը Kaiser Permanente Dual Complete South P1-ից փոխվում է Kaiser Permanente Dual Complete South P9-ի: Անդամների պլանի վերաբերյալ տեղեկությունները ուսումնասիրելիս անպայման հաշվի առեք ձեր նոր պլանի անունը:

Մինչև 2027թ-ի հունվար ամիսը դուք կստանաք նոր ID քարտ:

D. Փոփոխություններ մեր ցանցի բուժծառայություններ մատուցողների և դեղատների ցանկում

Ձեր դեղերի համար վճարվող գումարի չափը կախված է այն հանգամանքից, թե որ դեղատնից եք օգտվում: Մեր պլանն ունի դեղատների ցանց: Հիմնականում մենք դեղատոմսային դեղերի համար վճարում ենք *միայն* այն դեպքում, երբ դրանք տրամադրվում են մեր ցանցային դեղատներից որևէ մեկի կողմից:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

Մեր բուժծառայություններ մատուցողների և դեղատների ցանցը փոփոխվել է 2027 թ-ի համար:

Խնդրում ենք ծանոթանալ 2027 թվականի *Մատակարարների և դեղատների տեղեկատուին*՝ պարզելու համար, թե արդյոք ձեր մատակարարները (ընտանեկան բժիշկ, մասնագետներ, հիվանդանոցներ և այլն) կամ դեղատունը մեր ցանցում են: *Մատակարարների և դեղատների* թարմացված *տեղեկատուն* տեղադրված է մեր վեբկայքում՝ kp.org/directory (Անգլերեն): Դուք կարող եք նաև զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն՝ էջի ներքևում նշված հեռախոսահամարներով՝ բուժծառայություններ մատուցողների մասին թարմացված տեղեկություններ ստանալու համար կամ խնդրել, որպեսզի մենք ձեզ փոստով ուղարկենք *Մատակարարների և դեղատների տեղեկատուն*:

Կարևոր է իմանալ, որ մենք կարող ենք փոփոխություններ կատարել մեր ցանցում նաև տարվա ընթացքում: Եթե ձեր բուժծառայություններ մատուցողը դուրս է գալիս մեր պլանից, ապա ձեզ վերապահվում են որոշակի իրավունքներ և պաշտպանություն: Ավելի շատ տեղեկությունների համար տե՛ս ձեր *Անդամի ձեռնարկի* **3-րդ Գլուխը** կամ օգնություն ստանալու համար զանգահարեք Անդամներրի սպասարկման կենտրոն՝ էջի ներքևում նշված հեռախոսահամարով:

E. Նպաստների և ծախսերի փոփոխությունները հաջորդ տարվա համար

E1. Նպաստների և ծախսերի փոփոխություններ բժշկական ծառայությունների համար

Հաջորդ տարի մենք փոխում ենք մեր ապահովագրական ծածկույթը և ձեր վճարման պայմանները որոշակի բժշկական ծառայությունների համար: Ստորև աղյուսակում նկարագրված են այդ փոփոխությունները:

	2026 (այս տարի)	**2027 (հաջորդ տարի)**
Շտապօգնության ծառայություններ	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ծածկույթը, յուրաքանչյուր մեկ ուղղությամբ ուղևորության համար կվճարեք **$400**:	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ծածկույթը, յուրաքանչյուր մեկ ուղղությամբ ուղևորության համար կվճարեք **$290**:

	2026 (այս տարի)	2027 (հաջորդ տարի)
Դիաբետիկ թերապևտիկ կոշիկներ և ներդիրներ	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ծածկույթը, կվճարեք համապատասխանության **20%**:	Դուք վճարում եք **$0**:
Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ Durable medical equipment, (DME) Տե՛ս *Անդամի ձեռնարկի* **12-րդ գլուխը**՝ «Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ (DME)» տերմինի սահմանման համար:	Դուք վճարում եք **$0**: Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթը, դուք կվճարեք **0%** կամ **20% համապատասխանություն**՝ կախված ապրանքից:	Դուք վճարում եք **$0**:
Շտապ օգնության բաժանմունք	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ծածկույթը, յուրաքանչյուր այցելության համար կվճարեք **$115**:	Դուք վճարում եք **$0**:
Ակնոցների և տեսողության շտկման միջոցների նպաստ	Դուք յուրաքանչյուր 12 ամիսը մեկ ստանում եք **$350-**ի չափով նպաստ: եթե ձեր գնած ակնոցների կամ տեսողության շտկման միջոցների արժեքը գերազանցում է ձեր նպաստի չափը, ապա տարբերությունը վճարում եք դուք:	Դուք յուրաքանչյուր 12 ամիսը մեկ ստանում եք **$500-**ի չափով նպաստ: եթե ձեր գնած ակնոցների կամ տեսողության շտկման միջոցների արժեքը գերազանցում է ձեր նպաստի չափը, ապա տարբերությունը վճարում եք դուք:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

	2026 (այս տարի)	2027 (հաջորդ տարի)
Ստացիոնար ինտենսիվ բուժխնամք	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթը, յուրաքանչյուր հոսպիտալացման համար **1–5-րդ** օրերի համար կվճարեք օրական **$475** (հոսպիտալացման մնացած օրերի համար՝ **$0**):	Դուք վճարում եք **$0**:
Հոգեկան առողջության ստացիոնար խնամք	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթը, յուրաքանչյուր հոսպիտալացման համար **1–5-րդ** օրերի համար կվճարեք օրական **$405** (հոսպիտալացման մնացած օրերի համար՝ **$0**):	Դուք վճարում եք **$0**:
Բժշկական պարագաներ	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթը, դուք կվճարեք **0%** կամ **20%** համապահովագրություն՝ կախված ապրանքից:	Դուք վճարում եք **$0**:

	2026 (այս տարի)	2027 (հաջորդ տարի)
ՄՌՏ, ՀՏ և ՊԷՏ	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթը, յուրաքանչյուր պրոցեդուրայի համար կվճարեք **$500**:	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթը, յուրաքանչյուր պրոցեդուրայի համար կվճարեք **$50**:
Անհետաձգելի բուժզննության ծառայություններ	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթը, կվճարեք՝ **$0**, եթե շտապ օգնության բաժանմունքից տեղափոխվեք դիտարկման կամ դիտարկման ծառայությունը տրամադրվի ամբուլատոր վիրահատությունից հետո, կամ **$115** յուրաքանչյուր դիտարկման դեպքի համար, եթե որպես ամբուլատոր պացիենտ անմիջապես ընդունվեք հիվանդանոց՝ դիտարկման նպատակով:	Դուք վճարում եք **$0**:
Ամբուլատոր հիվանդանոցային ծառայություններ	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ծածկույթը, յուրաքանչյուր այցելության համար կվճարեք **$0–$475**՝ կախված մատուցվող ծառայությունից:	Դուք վճարում եք **$0**:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

	2026 (այս տարի)	2027 (հաջորդ տարի)
Ամբուլատոր վիրաբուժություն ամբուլատոր վիրաբուժական կենտրոնում	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթը, յուրաքանչյուր պրոցեդուրայի համար կվճարեք **$475**:	Դուք վճարում եք **$0**:
Առանց դեղատոմսի (Over the Counter, OTC) ապրանքներ	Դուք կստանաք **նախապես լիցքավորված առողջության հավելավճարների քարտ՝ $100** եռամսյակային արտոնության սահմանաչափով՝ իրավասու OTC ապրանքներ առցանց և մասնակցող մանրածախ խանութներում, այդ թվում՝ Kaiser Permanente-ի մանրածախ դեղատներում, գնելու համար:	Դուք կստանաք **նախապես լիցքավորված առողջության հավելավճարների քարտ՝ $170** եռամսյակային արտոնության սահմանաչափով՝ իրավասու OTC ապրանքներ առցանց և մասնակցող մանրածախ խանութներում, այդ թվում՝ Kaiser Permanente-ի մանրածախ դեղատներում, գնելու համար: **Եթե դուք համապատասխանում եք Քրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց համար հատուկ լրացուցիչ նպաստների (Special Supplemental Benefits for the Chronically Ill, SSBCI)** իրավասության պահանջներին, կարող եք նաև օգտագործել ձեր նպաստը առողջ սննդամթերք գնելու համար:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

	2026 (այս տարի)	2027 (հաջորդ տարի)
		Ձեր քարտը կվերալիցքավորվի հունվարի 1-ին, ապրիլի 1-ին, հուլիսի 1-ին և հոկտեմբերի 1-ին: Եռամսյակային նպաստի չօգտագործված մասը չի փոխանցվի հաջորդ եռամսյակ: Նշում՝ Նպաստը չի կարող օգտագործվել թեյավճարների կամ վճարների (օրինակ՝ առաքման կամ փոստային առաքման վճարների) համար:
Պրոթեզային սարքեր	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթը, կվճարեք համապատասխանության **20%**:	Դուք վճարում եք **$0**:
Հոգեմետ թմրամիջոցների օգտագործման և հոգեկան խնդիրների բուժում	**Ծածկվում է Ձեր Dual Complete պլանի շրջանակում՝ որպես Medicare-ի կողմից տրամադրվող նպաստ:** Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթը, յուրաքանչյուր հոսպիտալացման դեպքում կվճարեք **$100**:	**Չի ծածկվում Ձեր Dual Complete պլանի շրջանակում՝ որպես Medicare-ի կողմից տրամադրվող նպաստ:** **Բնակելի պայմաններում թմրամիջոցների օգտագործման խանգարումների և հոգեկան առողջության բուժումը ծածկվում է Ձեր Dual Complete պլանի շրջանակում՝ որպես Medi-Cal-ի նպաստ,**

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

	2026 (այս տարի)	2027 (հաջորդ տարի)
		որը տրամադրվում է Ձեր շրջանի վարքագծային առողջության ծառայությունների գործակալության կողմից:
Մասնագիտացված բուժքույրական հաստատության (Skilled Nursing Facility, SNF) խնամք	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթը, յուրաքանչյուր նպաստի ժամանակահատվածի ընթացքում կվճարեք՝ **$0**՝ **1–20**-րդ օրերի համար, և օրական **$214**՝ **21–100**-րդ օրերի համար:	Դուք վճարում եք **$0**: Եթե կորցնեք ամբողջական ծավալով Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթը, յուրաքանչյուր նպաստի ժամանակահատվածի ընթացքում կվճարեք՝ **$0**՝ **1–20**-րդ օրերի համար, և օրական **$221**՝ **21–100**-րդ օրերի համար:
Քրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց համար հատուկ լրացուցիչ նպաստներ (SSBCI) – առողջ սնունդ Առողջ սննդի նպաստը քրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց համար նախատեսված հատուկ լրացուցիչ ծրագրի մի մասն է: Ոչ բոլոր անդամներն են իրավասու ստանալու այս նպաստը: Իրավասու լինելու համար անդամները պետք է ունենան որոշակի քրոնիկ հիվանդություններ, ինչպիսիք են շաքարախտը,	**Չի** փոխհատուցվում:	**Փոխհատուցվում է, եթե համապատասխանում եք SSBCI-ի իրավասության պահանջներին:** Ծրագրի կողմից նույնականացված այն անդամները, որոնք համապատասխանում են այս նպաստի չափանիշներին, կարող են օգտագործել OTC-ի տողում նկարագրված **նախապես լիցքավորված Լրացուցիչ առողջապահական արտոնությունների քարտը**՝ OTC պրանքներից բացի նաև առողջ սնունդ, օրինակ՝ մրգեր և բանջարեղեն, առցանց և

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

	2026 (այս տարի)	2027 (հաջորդ տարի)
ճարպակալումը, սրտանոթային խանգարումները, օստեոարթրիտը կամ երիկամների քրոնիկ հիվանդությունը: Կան նաև այլ հիվանդություններ, որոնց առկայության դեպքում դուք կարող եք իրավասու լինել ստանալու այս նպաստը: Այս նպաստը ստանալու իրավասությունը չի կարող երաշխավորվել միայն ձեր հիվանդության հիման վրա: Նախքան նպաստի տրամադրումը պետք է բավարարվեն իրավասության բոլոր կիրառելի պահանջները: Մանրամասների համար խնդրում ենք կապվել մեզ հետ:		մասնակցող մանրածախ խանութներից գնելու համար: Ձեր քարտը կվերալիցքավորվի հունվարի 1-ին, ապրիլի 1-ին, հուլիսի 1-ին և հոկտեմբերի 1-ին: Եռամսյակային նպաստի չօգտագործված մասը չի փոխանցվի հաջորդ եռամսյակ: Նշում՝ Նպաստը չի կարող օգտագործվել թեյավճարների կամ վճարների (օրինակ՝ առաքման կամ փոստային առաքման վճարների) համար: Լրացուցիչ մանրամասների համար խնդրում ենք ծանոթանալ Ձեր *Անդամի ձեռնարկին*:
Տրանսպորտային ծառայություններ – Medicare-ի կողմից չծածկվող ոչ շտապ բժշկական տրանսպորտային ծառայություններ Եթե ծառայությունը նշանակված է ցանցային մատակարարի կողմից, մենք ծածկում ենք բժշկական առումով անհրաժեշտ, ոչ շտապ տրանսպորտային ծառայությունները՝ լիցենզավորված	**Չի** փոխհատուցվում:	Փոխհատուցվում է: Դուք վճարում եք **$0**:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

	2026 (այս տարի)	2027 (հաջորդ տարի)
պատգարակով/պատգարակ-մեքենայով կամ սայլակով տեղափոխման մեքենայով՝ տուն (մինչև 100 մղոն հեռավորության վրա), հմուտ բուժքույրական խնամքի հաստատություն (SNF) կամ խնամքի ավելի բարձր մակարդակ ապահովող այլ հաստատություն տեղափոխելու համար, եթե տեղափոխումն իրականացվում է անմիջապես ստացիոնար հոսպիտալացումից կամ շտապ, անհետաձգելի բուժօգնության կամ ամբուլատոր հիվանդանոցային որոշակի այցելություններից հետո:		

E2. Փոփոխություններ դեղերի փոխհատուցման ծածկույթում

Փոփոխություններ մեր *Դեղերի ցանկում*

Մեր Փոխհատուցվող դեղերի ցանկը կոչվում է նաև Ֆորմուլյար կամ Դեղերի ցանկ: Մեր Դեղերի ցանկի պատճենը հասանելի է առցանց՝ kp.org/seniorrx (Անգլերեն) հասցեով: Մենք մեր *Դեղերի ցանկում* կատարել ենք փոփոխություններ, որոնք կարող են ներառել որոշակի դեղերի հեռացում կամ ավելացում, մեր կողմից փոխհատուցվող դեղերի փոփոխություն և որոշակի դեղերի նկատմամբ մեր կողմից սահմանափակումների փոփոխություն, կամ դեղերի տեղափոխում ծախսերի բաշխման այլ մակարդակ:

Վերանայեք *Դեղերի ցանկը*՝ **համոզվելու համար, որ ձեր դեղերը կփոխհատուցվեն հաջորդ տարի**, և պարզելու համար՝ արդյոք կան սահմանափակումներ, կամ ձեր դեղը տեղափոխվել է ծախսերի բաշխման այլ մակարդակ:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

Դեղերի ցանկի փոփոխությունների մեծ մասը նոր են յուրաքանչյուր տարվա սկզբի համար: Այնուամենայնիվ, մենք կարող ենք կատարել Medicare-ի և/կամ նահանգի կողմից թույլատրված այլ փոփոխություններ, որոնք օրացուցային տարվա ընթացքում կարող են ազդել ձեզ վրա: Մենք թարմացնում ենք մեր առցանց *Դեղերի ցանկն* առնվազն ամսական կտրվածքով, որպեսզի տրամադրենք դեղերի ամենաարդիական ցանկը: Եթե մենք փոփոխություն կատարենք, որը կազդի ձեր ընդունած դեղամիջոցի վրա, մենք ձեզ ծանուցում կուղարկենք փոփոխության մասին:

Եթե ձեզ վրա ազդում է դեղերի փոխհատուցման պայմանների փոփոխությունը, մենք ձեզ խորհուրդ ենք տալիս.

- Խորհրդակցել ձեր բժշկի (կամ դեղ նշանակողի) հետ, որպեսզի ձեզ առաջարկի այլ դեղամիջոց, որը մենք կփոխհատուցենք:
    - Դուք կարող եք զանգահարել Անդամների սպասարկման բաժին՝ էջի ներքևում նշված հեռախոսահամարներով՝ միևնույն առողջական խնդրի բուժման համար կիրառվող փոխհատուցվող *դեղերի ցանկը* խնդրելու համար:
    - Այս ցանկը կարող է օգտակար լինել ձեր բուժծառայություններ մատուցողի համար՝ ձեզ հարմար փոխհատուցվող դեղամիջոցը գտնելու համար:
- Խնդրեք, որպեսզի մենք ապահովենք դեղամիջոցի ժամանակավոր փոխհատուցումը:
    - Որոշ դեպքերում մենք **ժամանակավորապես** փոխհատուցում ենք դեղը օրացուցային տարվա առաջին 90 օրվա ընթացքում:
    - Այս ժամանակավոր փոխհատուցումը նախատեսված է մինչև 30 օրվա համար: (Մանրամասն տեղեկությունների համար, թե երբ կարող եք ստանալ ժամանակավոր մատակարարում և ինչպես դիմել դրա համար, այցելեք *Անդամի ձեռնարկի* **5-րդ Գլուխը**:)
    - Երբ ստանաք դեղամիջոցի ժամանակավոր փոխհատուցում, ապա խորհրդակցեք ձեր բժշկի հետ, թե ինչ պետք է անեք, ժամանակավոր փոխհատուցման ժամկետը լրանալուց հետո: Դուք պետք է կա՛մ մեր պլանի կողմից փոխհատուցվող այլ դեղամիջոց սկսեք օգտագործել, կա՛մ պետք է խնդրեք մեզ, որպեսզի ձեզ համար բացառություն անենք և փոխհատուցենք ձեր ընթացիկ դեղը:
    - Դեղերի ցանկում ներկայումս հաստատված բոլոր բացառությունների ժամկետը լրանում է յուրաքանչյուր օրացուցային տարվա վերջում, և դրանք պետք է նորից ներկայացվեն հաստատման նոր տարվա սկզբին:

Դեղերի արժեքների փոփոխություններ

Քանի որ դուք համապատասխանում եք Medi-Cal-ի պահանջներին, դուք ստանում եք Extra Help Medicare-ից, որը նպատակ ունի օգնել ձեզ վճարել Medicare Մաս D-ի դեղատոմսային դեղերի համար: Մենք Ձեզ ուղարկել ենք առանձին ներդիր՝ «Դեղատոմսով դեղերի համար ֆինանսական Extra Help ստացող անձանց համար Ապահովագրական ծածկույթի ապացույցի հավելված» (Evidence of Coverage Rider for People Who Get Extra Help Paying for Prescription Drugs) (որը նաև կոչվում է «Ցածր եկամուտ ունեցող անձանց սուբսիդիայի հավելված» Low Income Subsidy Rider) կամ «LIS Rider», որը տեղեկություններ է պարունակում Ձեր դեղերի ծածկույթի վերաբերյալ: Եթե դուք չունեք այս ներդիրը, զանգահարեք Անդամների սպասարկման բաժին և նրանցից պահանջեք «LIS Rider»-ը:

Մեր պլանով Medicare Մաս D-ով տրամադրվող դեղերի փոխհատուցման պլանի համար գոյություն ունի վճարման երկու փուլ: Ձեր վճարած գումարը կախված է Extra Help-ի Ձեր մակարդակից և այն բանից, թե որ փուլում եք գտնվում, երբ ստանում կամ վերալիցքավորում եք դեղատոմսով դեղը: Երկու փուլերն են՝

Փուլ 1-ին **Սկզբնական փոխհատուցման փուլ**	**Փուլ 2-րդ** **Կրիտիկական փոխհատուցման փուլ**
Այս փուլում մեր պլանը վճարում է ձեր դեղերի ծախսերի մի մասը, իսկ դուք վճարում եք ձեր բաժինը: Այն մասը, որը դուք եք վճարում, կոչվում է համավճար: Այս փուլը սկսվում է այն ժամանակ, երբ ստանում եք տարվա ձեր առաջին դեղատոմսային դեղերը:	Այս փուլում պլանը վճարում է ձեր դեղերի բոլոր ծախսերը մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը: Այս փուլը սկսվում է՝ ձեր գրպանից որոշակի գումար վճարելուց հետո:

Սկզբնական փոխհատուցման փուլն ավարտվում է այն ժամանակ, երբ ստացվող դեղերի՝ ձեր գրպանից վճարվող ընդհանուր ծախսերը հասնում են **$2,400**-ի: Այդ պահից սկսվում է Կրիտիկական փոխհատուցման փուլը: Մեր պլանը փոխհատուցում է ձեր դեղերի բոլոր ծախսերը այդ պահից սկսած մինչև տարվա վերջ: Ուսումնասիրեք *Անդամի ձեռնարկի* **6-րդ Գլուխը**՝ դեղերի համար վճարվելիք չափի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:

E3. Փուլ 1. «Սկզբնական փոխհատուցման փուլ»

Սկզբնական փոխհատուցման փուլում մեր պլանը վճարում է փոխհատուցվող դեղերի ծախսերի մի մասը, իսկ դուք վճարում եք ձեր բաժինը: Այն մասը, որը դուք եք վճարում, կոչվում է համավճար: Համավճարը կախված է նրանից, թե գնային որ կատեգորիայում է դեղը, որի ծախսերը կիսվում են, և որտեղից եք այն ձեռք բերում: Դուք համավճար եք վճարում ամեն անգամ, երբ դեղատոմսային դեղ եք ստանում: Եթե փոխհատուցվող դեղի արժեքը համավճարից պակաս է, դուք վճարում եք ավելի ցածր գինը:

Մենք տեղափոխել ենք մեր *Դեղերի ցանկի* որոշ դեղեր ավելի ցածր կամ ավելի բարձր կատեգորիաների: Եթե ձեր դեղերը տեղափոխվում են կատեգորիայից կատեգորիա, դա կարող է ազդել ձեր համավճարի վրա: Պարզելու համար, թե արդյոք ձեր դեղերը այլ կատեգորիայում են, փնտրեք դրանք մեր *Դեղերի ցանկում*:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս ձեր մեկ ամսվա մատակարարման արժեքը, որը ստանում եք ցանցային դեղատնից մեր վեց դեղերի մակարդակներից յուրաքանչյուրի ստանդարտ համավճարներով: Այս գումարները կիրառվում են **միայն**, երբ Սկզբնական փոխհատուցման փուլում եք:

Մեծահասակների Մաս D-ի պատվաստանյութերի մեծ մասը ձեզ տրամադրվում է անվճար: Երկարաժամկետ պաշարի վերաբերյալ տեղեկությունների համար այցելեք ձեր *Անդամի ձեռնարկի* **6-րդ Գլխի D բաժինը**:

	2026 (այս տարի)	2027 (հաջորդ տարի)
